

4. Ա. ՊԱՐՍԱՄՅԱՆ

ԼԵՀԱԿԱՅԵՐԻ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԴԱՎԻԹ-ԲԵԿԻ
ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆԸ

Ե Ր Ե Վ Ա Ն
1962

В. А. ПАРСАМЯН

УЧАСТИЕ
ПОЛЬСКИХ АРМЯН
В ВОССТАНИИ
ДАВИД-БЕКА

НОВЫЕ МАТЕРИАЛЫ
ОБ АРМЯНСКОМ ОСВОБОДИТЕЛЬНОМ
ДВИЖЕНИИ XVIII ВЕКА

ИЗДАТЕЛЬСТВО
ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА
ЕРЕВАН . . . 1 9 6 2

35
Վ. Ա. ՊԱՐՍԱՄՅԱՆ

ԼԵՀԱՂԱՅԵՐԻ
ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ
ԴԱՎԻԹ-ԲԵԿԻ
ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆԸ

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ XVIII ԴԱՐԻ ՀԱՅ
ԱԶԳԱՎՐԱԿԱՆ ԶԱՐԹՈՒՄՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ . . . 1 9 6 2

115

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ

Սույն աշխատությունը նվիրված է XVIII դարի հայ ազատագրական շարժումների մինչ այժմ անհայտ էջերի լուսաբանությանը: Գրում առաջին անգամ հրատարակվում են արխիվային մի շարք փաստաթղթեր, որոնք հար ճյուր են տալիս հայ ազատագրական շարժումների, հայ-ուսական, հայ-ուկրաինական և հայ-լեհական հարաբերությունների պատմության համար:

ОТ ИЗДАТЕЛЬСТВА

Настоящая работа посвящена изучению неизвестных до сих пор страниц истории освободительного движения армян XVIII века. В книге впервые публикуется ряд архивных документов, которые дают новые материалы по истории армянского освободительного движения, армяно-русских, армяно-украинских и армяно-польских отношений.

Կազմակերպում է Երևանի Պետական համալսարանի Խորհրդական-հրատարակչական խորհրդի որոշմամբ

ԱՌԱՋԱՐԱՆ

Հայ ազատագրական շարժումների պատմության մեջ XVIII դարը հերոսական մաքառումների մի ժամանակաշրջան է: Թուրքական ու պարսկական բռնակալության ծանր լծից Հայաստանի ազատագրության համար մղվող պայքարը այդ շրջանում աննախընթաց վերելք է ապրում: Ներքին և արտաքին մի շարք հանգամանքների բերումով ազատագրական պայքարի են ելնում ժողովրդի ավելի լայն զանգվածները, հանդես են գալիս քաղաքական ավելի հասուն և խիզախ գործիչներ, մշակվում են նոր ծրագրեր, հետզհետե սկսում է ձևավորվել ազատագրական շարժման գաղափարախոսությունը:

Հայ ժողովրդի ազատագրական պայքարը սուլթանական Թուրքիայի և շահական Պարսկաստանի դեմ սկիզբ է առնում հենց այն շրջանից, երբ նրանք ագրեսիվ քայլերի են դիմում Հայաստանը նվաճելու համար:

Հայ ժողովրդի ազատագրական շարժումը օտար նվաճողների դեմ ուղղված շարժում էր, հայրենիքի ազատության ու անկախության համար մղված միանգամայն արդարացի և պրոգրեսիվ պայքար: Հայ ազատագրական շարժումները պատկանում էին օտար նվաճողների ու հարստահարողների դեմ ազատասեր ժողովուրդների մղած այն շարժումների թվին, որոնք նպաստում էին հասարակության պատմական զարգացմանը, մարդկության առաջընթացին:

Թուրքական և պարսկական զավթիչների լծից Հայաստանն ազատագրելու համար որոշակի քայլեր են կատարվում տակավին XVI դարի կեսերին: 1547 թվականին էջմիածնում զոմարված գաղտնի ժողովի հանձնարարությամբ Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսը գնում է Եվրոպա և դիմումներ անում՝ հայերին օգնելու համար:

1562 թվականին Միքայել Սեբաստացու զխավորությամբ Սեբաստիայում զոմարված գաղտնի խորհրդակցությունը որոշում է դիմել Հռոմի պապի օգնությանը: Բանակցություններ վարելու հա-

մար Հոռոմ է ուղարկվում Աբգար դպիր Քոխատեցին, որն հետագայում աչքի ընկնող դեր է կատարում հայ տպագրության ասպարեզում: 1585 թվականին Հոռոմի պապի օգնությանն են դիմում նաև Կիլիկիայի հայ հոգևոր և աշխարհիկ ներկայացուցիչները:

Սակայն այդ բոլոր դիմումները մնում են անհետևանք: Հոռոմի պապերին և Արևմուտքի կառավարող շրջաններին Հայաստանի ազատագրությունը հետաքրքրում էր այնքանով, որքանով դա անհրաժեշտ էր Արևելքում կաթոլիկություն և իրենց ազդեցությունը տարածելու համար:

Հայաստանի ազատագրության հարցը վերստին արծարծվում է XVII դարի երկրորդ կեսին: Այս շրջանում ազատագրական շարժման ղեկավար գործիչները, Արևմուտքից բացի, իրենց հույսերը ավելի ու ավելի սկսում են կապել Հյուսիսի հզորացող տերություն՝ Ռուսաստանի հետ: XVII դարի 70-ական թվականների սկզբներին (հավանաբար 1670—1671 թվականներին) Գանձասարի Պետրոս կաթողիկոսը հատուկ նամակով դիմում է Ալեքսեյ Միխայլովիչին և խնդրում պաշտպանել անօրենների լծի տակ գտնվող հայ ժողովրդին¹: Նույն այդ շրջանում պարսիկների ծանր հարկապահանջության և ճնշումների դեմ Ալեքսեյ Միխայլովիչի օգնությանն է դիմում նաև էջմիածնի կաթողիկոս Հակոբ Զուղայեցին²:

Քուրբ-պարսկական զավթիչների դեմ ուղղված հայ ազատագրական շարժման սկզբնավորման ու ձևավորման այդ առաջին շրջանին շուտով հաջորդում է նոր, ավելի կազմակերպված ու հասուն շրջան: XVII դարի վերջին և XVIII դարի սկզբին հայ ազատա-

¹ Տես Վ. Պարսամյան, Հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ազգային գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», 1952 թ., № 7, էջ 82 և «Армяно-русские отношения в XVII веке», Подготовили к печати В. А. Парсамян, В. К. Восканян, С. А. Тер-Авакимова, под редакцией проф. В. А. Парсамяна, 1953, стр. 92:

² Տես Աշոտ Հովհաննիսյան, Հակոբ Զուղայեցու մի գրությունը ռուս արքունիքին, «Արարատ», 1915 թ. և «Армяно-русские отношения в XVII веке», стр. 98, 257—258.

Հակոբ Զուղայեցու այս նամակը, որն 1915 թվականին հայտնաբերել և հրատարակել է ակնափոր պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը, երկար ժամանակ համարվում էր XVII դարում ռուսական արքունիքին զբաղած առաջին և միակ դիմումը: Մոսկվայի Հին ակտերի արխիվում 1946 թվականին մեր հայտնաբերած՝ Պետրոս կաթողիկոսի դիմումը Ալեքսեյ Միխայլովիչին ցույց է տալիս, որ Զուղայեցու նամակը առաջին և միակ փաստաթուղթը չէ XVII դարի հայ-ռուսական քաղաքական կապերի վերաբերյալ:

դրական շարժման ամենափայլուն դեմքերից մեկը՝ Իսրայել Օրին Հոյաստանի ազատագրությունը դնում է ավելի ուսում ու ամուր հիմքերի վրա և կապում է Ռուսաստանի օգնության հետ: Երկար տարիներ Արևմտյան Եվրոպայում գործելուց, մեծ ճիգ ու ջանք գործադրելուց և շատ զրկանքներ կրելուց հետո, Օրին գալիս է այն եզրակացության, որ միայն Եվրոպայի հետ հույս կապելով անհնարին է ազատագրել Հայաստանը: Եթե իր գործունեության առաջին շրջանում 1680—1690-ական թվականներին, նա քայլում էր տրոբված ճանապարհով, Հայաստանի ազատագրությունը գերազանցապես կապում էր Հոռոմի պապի և Արևմուտքի տերությունների օգնության հետ, ապա XVII դարի մայրամուտին նա իր հայացքը դարձնում է դեպի Արևելք, դեպի Ռուսաստան և գերազանցապես նրա հետ կապում Հայաստանի ազատագրությունը:

Իսրայել Օրոն զաղափարական այս էվոլյուցիան միանգամից տեղի չունեցավ: Մոտիկից ծանոթանալով եվրոպական տերությունների ներքին և արտաքին քաղաքականությանը, կոփվելով զրկանքներով ու դառնություններով լի իր ասպետական կյանքի բովում, նա աճեց ու դարձավ ավելի շրջահայաց, հասուն ու հեռատես քաղաքական գործիչ և դիվանագետ:

Հայաստանում և Մերձավոր Արևելքում, Արևմտյան Եվրոպայում ու Ռուսաստանում կատարվող պատմական իրադարձությունները իրենց խորը կնիքն են դնում Իսրայել Օրոն կյանքի և գործունեության վրա: Մի կողմից՝ հուսախաբված Արևմուտքի տերություններից, մյուս կողմից՝ հաշվի առնելով Ռուսաստանի և Անդրկովկասի ժողովուրդների պատմական կապերը և նրանց զարգացման հեռանկարները, Օրին կանգնում է նոր ուղու վրա, դառնում հայ-ռուսական օրինետաղիայի ամենաչեղմ պաշտպանն ու ջատագովր:

1701 թվականին Օրին, Մինաս վարդապետ Տիգրանյանցի հետ, լեհաստանի վրայով գալիս է Մոսկվա: Նա հայ մեխիքների անունից, նրանց կնիքներով ու ստորագրություններով, դիմումներ է ներկայացնում Պետրոս I-ին և օգնություն խնդրում՝ Հայաստանը թուրք-պարսկական լծից ազատագրելու համար:

Օրին մոտիկ կապեր է հաստատում Մոսկվայում գտնվող վրացական Արչիլ թագավորի հետ, որն այդ նույն ժամանակ բանակցություններ էր վարում Վրաստանի ազատագրության վերաբերյալ: Պատմական վավերագրերը ցույց են տալիս, որ երկու բախտակից ժողովուրդների ներկայացուցիչները Մոսկվայի բանակցությունների ժամանակ փոխադարձաբար օգնում և օժանդակում էին միմ-

յանց, միացալ ուժերով մշակում՝ Ռուսաստանի օգնությունը Հայաստանի ու Վրաստանի ազատագրության, հայ-վրացական զինակցության նոր ծրագիր: Ինչպես Օրին, այնպես էլ Արշիլը տվյալ զեպքում ընթանում էին հայ և վրաց ժողովուրդների դարավոր բանակամտության լուսավոր ուղիներով:

Պետրոս Մեծը, որը խոշոր քաղաքագետ էր և հեռատես պետական գործիչ, Օրու հետ վարած բանակցություններին տալիս է խելացի և գործնական ընթացք: Ելնելով ռուսական կայսրության զարգացման ու ամրապնդման, հատկապես նրա արևելյան քաղաքականության շահերից ու հեռանկարներից, նա հայ պատվիրակներին հուսադրում և խոստանում է Հյուսիսային պատերազմն ավարտվելուց հետո օգնություն ցույց տալ նրանց:

Մոսկվայի բանակցությունների ընթացքում Օրին, Մինաս վարդապետի և ուրիշների հետ, մշակում է Հայաստանի ազատագրության նոր ծրագիր: Ի տարբերություն նրա հեռնուսյան ծրագրի, որն իրագործվելու էր Պֆալցի Կուրֆյուրստի միջոցով, մոսկովյան ծրագրի կենսագործումն ամբողջապես կապվում էր Ռուսաստանի օգնության հետ: Նա մեծ վարպետությամբ շարադրում է 25 հազարանոց ռուսական զորքերի դեպի Հայաստան կատարելիք ռազմական արշավանքի մանրակրկիտ պլանը, նշում հեծյալ և հեռակա զորամասերի հարձակման ճանապարհները, նրանց կայանները, նկարագրում ու բնութագրում ամրությունները և այլն: Օրին, ամենայն հավանականությամբ Արշիլի հետ միասին, մշակում է նաև հայերի ու վրացիների զինված ապստամբության և ռուսական զորքերի հետ համատեղ գործելու պլանը:

1701 թվականի Մոսկվայի բանակցություններից հետո հաստատուն հիմքերի վրա են դրվում հայ-ռուսական քաղաքական հարաբերությունները: Հայաստանի ազատագրությունը մեկընդմիջակապվում է Ռուսաստանի հետ: Հայերի ռուսական օրինատացիան, որը միակ ունալ և ճիշտ օրինատացիան էր, հետզհետե դառնում է արևմտյան:

Այդ շրջանից սկսած, ավելի քան մի դար հայ ժողովուրդը հեռաբար մաքառում է քուրմական ու պարսկական հարստահարիչների դեմ, իր հաղթանակի հույսերը կապելով Ռուսաստանի օգնության հետ:

Հայ ազատագրական պայքարի այդ ընդհանուր շղթայի կարևոր օղակներից է ահա, Գավիթ-Բեկի գլխավորած ապստամբությունը:

Գավիթ-Բեկի ապստամբությունը և առհասարակ հայ ազատագրական շարժումը, մեկուսացած, ազգային նեղ շրջանակներում մեջ պարփակված շարժում չէր: Նա սերտորեն կապված էր Անդրկովկասի մյուս ժողովուրդների ազատագրական պայքարի հետ, որոնք նույնպես հեծում էին սուլթանական Թուրքիայի ու շահական Պարսկաստանի լծի տակ և ազատության էին ձգտում:

Հայտնի է, թե 1722 թվականին Գանձակի մոտ ինչպիսի ոգևորությամբ միավորվեցին Վրաստանի Վախտանգ VI թագավորի և նախի Հասան-Ջալալյանի տրամադրության տակ եղած վրացական ու հայկական զինված ուժերը, որոնք երգիկներին ձեռք-ձեռքի տված կովել ընդհանուր թշնամու դեմ: Հայտնի է նաև այն, որ Գավիթ-Բեկը, մի քանի տասնյակ հայ ռազմիկներին հետ Վրաստանից եկավ Սյունիք՝ ազատագրական պայքարը տեղում զլխավորելու համար: Քիչ փաստեր չկան նաև հայ-աղբբեջանական համատեղ պայքարի մասին: Այնպես որ, ճիշտ չէր լինի Գավիթ-Բեկի ապստամբությունը դիտել որպես մեկուսացած մի ապստամբություն, կտրելով այն հարևան երկրների և Ռուսաստանի հետ ունեցած քաղաքական հարաբերությունների շղթայից:

Պատմական փաստերը ցույց են տալիս, որ Ղարաբաղի և Սյունիքի ապստամբության նախապատրաստման ուղղությամբ զգալի աշխատանքներ էին կատարվել ինչպես Անդրկովկասում, այնպես էլ Անդրկովկասից դուրս: Նախատեսված էր ապստամբությունն սկսել Ղարաբաղում և Սյունիքում, որտեղ հայ մելիքություններն էին և քիչ թե շատ կազմակերպված զինված ուժեր կային: Այնուհետև, Ղարաբաղի և Սյունիքի աշխարհագրական դիրքը ամենից նպաստավորն էր: Այդտեղ պետք է ապստամբների հետ միանալին Կասպից ծովով, Շամախու, Գերբենդի, Բարվի վրայով օգնության եկած ռուսական զորքերը և Գանձակի վրայով Արցախ—Ղարաբաղ մտած վրացական զինված ուժերը: Այդտեղից պետք է ապստամբական շարժումը ծավալվեր և Հայաստանն ու ամբողջ Անդրկովկասը ազատագրեր պարսիկ խաների ու թուրք փաշաների լծից: Նկատենք, որ ազատագրական շարժման այս ծրագիրը հիմնականում համապատասխանում էր Իսրայել Օրու մշակած ծրագրին, որն հավանություն էր գտել Պետրոս I-ի կողմից, 1701 թվականի բանակցությունների ժամանակ:

1722 թվականի հուլիսին սկսվում է Պետրոս I-ի պարսկական արշավանքը: Այդ արշավանքի առիթը Գաղստանի ֆեոդալ Դուռթ-Բեկին պատժելն էր, որը զրավել էր Շամախին և կողոպտել այնտեղ:

գտնվող ուս և հայ վաճառականներին: Ռուսական զորքերը, Պետ-
րոս I-ի հրամանատարութեամբ, Կասպից ծովով և ցամաքով գրա-
վում են Դերբենդը, Բաքուն, Գիլանը, Մազանդարանը և այլ վայրեր:

Ռուսական զորքերի երևալը Անդրկովկասի սահմաններում ազ-
դանշան է դառնում հայկական և վրացական զինված ուժերի ապրա-
տամբության համար: 1722 թվականից սկսվում են Դավիթ-Քեկի,
Եսայի Հասան-Ջալալյանի, Ավան յուղբաշու, Մխիթար սպարապե-
տի և մյուսների հրամանատարության տակ գտնվող զինված ուժերի
մարտական գործողությունները պարսկական խաների դեմ:

Տաղանդավոր զորավար և ջերմ հայրենասեր Դավիթ-Քեկի հրա-
մանատարութեամբ հայկական զինված ուժերը փախուցնում են Տաղթանակ-
ներ և տանում թշնամու դեմ: Նրանք աղատագրում են Արցախին
ու Սյունիքը և հայկական անկախ իշխանություն հիմնում:

1723 թվականին թուրքական զորքերը ներխուժում են Վրաս-
տան: Հունիսին նրանք գրավում են Քելիխին և շարժվում դեպի
Ղարաբաղ: Գանձակի մոտ թուրքական զորքերը հանդիպում են հա-
յերի և աղբրեջանցիների համատեղ միահամուռ դիմադրության և
մեծ կորուստներ տալով հարկադրված ետ են քաշվում:

1724 թվականի գարնանը թուրքական մի մեծ զորաբանակ Շի-
րակի վրայով մտնում է Արարատյան դաշտը՝ դեպի Քավրիզ և
Կասպիականի ափերը արշավելու համար: Թուրքական զորքերի խն-
դիրն էր՝ գրավել ամբողջ Անդրկովկասը, հնչել հայերի և վրացի-
ների ապստամբությունները և ուսական զորքերին շուրս մղել Ան-
դրկովկասի սահմաններին:

Թուրքական զորքերի հանկարծակի ներխուժումը Անդրկովկաս,
չափազանց ծանր ու դժվարին դրություն է ստեղծում հայերի
համար: Կարբիում և հատկապես Երևանում, հայերը ուժեղ դիմա-
դրություն են ցույց տալիս թուրքական զավթիչներին: Երևանի և
շրջակայքի հայ բնակչությունը, Հովհաննես Հունդիբեկյանի և ուրիշ-
ների ղեկավարությամբ, ավելի քան երկու ամիս հերոսական կռի-
ւներ է մղում թուրքական բանակների դեմ:

1724 թ. հունիսի 7-ին թուրքական մի քանի տասնյակ հազա-
րանոց զորքերը միացյալ ճակատով գրոհում են Երևանի վրա: Վաղ
առավոտից մինչև ուշ երեկո կատաղի մարտեր են տեղի ունենում
քաղաքի մատուցներում, փողոցներում ու բակերում: Հայերից
մոտ 10 հազար մարդ սպանվում ու վիրավորվում են: Թշնամու կո-
րուստներն ավելին էին: Ծանր կորուստների գնով միայն թուրքերը

կարողանում են դրավել Երևանը՝ թալանի ու կողոպտաի մատնե-
լով այն:

Երևանը գրավելուց հետո թուրքական զորքերը մորեխի պե-
տրշավում են Սյունիքի ու Ղարաբաղի վրա: Օրհասական վտանգ է
ստեղծվում Ղարաբաղի հայկական իշխանության և ամբողջ բնակ-
չության համար:

Պետրոս I-ը հաշվի առնելով ստեղծված նոր իրադրությունը՝
թուրքիայի հետ պատերազմ ծագելու վտանգը, որի համար նա
պատրաստ չէր (նոր էր միայն վերջացել Հյուսիսային երկարա-
տև պատերազմը), եվրոպական պետությունների թշնամական
զիրքը, Կասպից ծովում փոթորիկի հետևանքով ուսական զոր-
քերի պաշարների կորուստները և այլն, որոշում է բավարարվել
Կասպիականի ափերով և Անդրկովկասի գրավումը թողնել հետո-
գային: 1724 թ. հունիսի 12-ին Ռուսաստանի և Թուրքիայի միջև
պայմանագիր է կնքվում, որի համաձայն Կասպիականի ափերը
անցնում են Ռուսաստանին, իսկ Անդրկովկասի մնացած մեծ մա-
սը՝ Թուրքիային:

1724 թ. հունիսի 12-ի ուս-թուրքական պայմանագիրը միա-
կողմանի պայմանագիր էր և անտեսում էր Անդրկովկասի ժողո-
վուրդների կենսական շահերը: Պետրոս I-ը, որն Օրու հետ վարած
բանակցությունների բնթացքում, իր պարսկական արշավանքի
ժամանակ ամեն կերպ հուսադրել ու ոգեշնչել էր հայերին, հու-
նիսի 12-ի պայմանագրով, հակառակ սպասածին, հուսախար էր
անում նրանց: Այդ պայմանագիրը և ուսական զորքերի նախա-
տեսված օգնության ուշացումը աննպաստ պայմաններ էին ստեղ-
ծում հայերի, ինչպես և Անդրկովկասի մյուս ժողովուրդների, ազա-
տագրական պայքարի համար: Անդրկովկասի ժողովուրդների ազա-
տագրական շարժման մեջ եղած ներքին հակասություններն ու
դժվարությունները նման պայմաններում ավելի էին դրսևորվում
և մեծապես վնասում նրանց պայքարին:

Հրապարակված և մեր ձեռքի տակ եղած անտիպ վավերագրե-
րը ցույց են տալիս, թե ինչպիսի ծանր ու դժվարին կացություն
էր ստեղծվել հայ ազատագրական շարժման համար Ղարաբաղում
և Սյունիքում 1724—1728 թվականներին: Այդ վավերագրերը միա-
ժամանակ վառ կերպով արտահայտում են այն մեծ ու հերոսական
պայքարը, որ Դավիթ-Քեկի, Ավան յուղբաշու, Մխիթար սպա-
րապետի և ուրիշների ղեկավարությամբ հայերը մղել են իրենց
ազատության ու անկախության համար:

Մերձկասպյան շրջանի ուսական զորքերի հրամանատար գեներալ Վ. Վ. Գոլզորուկովը 1727 թ. մայիսի 11-ին Գերբենդից գրած իր մի զեկուցագրում, խոսելով թուրքական մեծաթիվ զորքերի դեմ հայերի մղած կռիվների մասին, ասում է. «Մարդկային մաքից վեր է, քե ինչպես են նրանք պաշտպանվում այդքան ուժեղ քրչնամուց»¹:

1724—1728 թվականներին Ղարաբաղի և Սյունիքի հայերը անօրինակ հերոսամարտեր են մղում թուրքական զավթիչների դեմ: Մի շարք տեղերում նրանց օգնում ու օժանդակում են նաև վրացիները, ադրբեջանցիներն ու քրդերը:

1726 թվականին Մեծ և Փոքր սղնախներում, 1727 թվականին Հալիձորի և Մեղրիի ճակատամարտերում հայերը փոքրաթիվ ուժերով փայլուն հաղթանակներ են տանում թուրքական զորքերի դեմ, քաջության, խիզախության և հայրենասիրության բազմաթիվ վառ օրինակներ գրում մեր ազատագրական պայքարի պատմության մեջ: Այս կռիվներում, բացի հռչակված զորավար Գավրիթ-Բեկից, աչքի են ընկնում նաև Եսայի Հասան-Ջալալյանը, Ավան: յուզբաշին, Մխիթար սպարապետը, Ստեփանոս Շահումյանը, Թարխան յուզբաշին, Գրիգոր յուզբաշին, Տեր Ավետիսը, Թորոսը, Բայանդուրը, Օհանը, Աբրահամը, Ավթանդիլը և շատ ուրիշներ:

Ազատագրական այս շարժումներին է, ահա, որ մագնակցել են նաև Ուկրաինայից ու Լեհաստանից օգնության եկած հայ հայրենասերները:

Ղարաբաղի և Սյունիքի ազատագրական շարժումների և Գավրիթ-Բեկի մասին արժեքավոր աշխատություններ են հրատարակվել: Մենք նկատի ունենք Կարապետ Եղյանի «Сношения Петра Великого с армянским народом» (1898 թ.) փաստաթղթերի հարուստ ժողովածուն, բազմամասնակ պատմաբան պրոֆ. Լեոնի «Հայոց պատմություն» (հատոր 3, 1946 թ.), ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» (գիրք 2, 1950 թ.), պրոֆ. Ա. Աբրահամյանի «Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ուսական հարաբերությունների պատմությունից» (1953 թ.), դոցենտ Ա. Միրզոյանի «Հայ ազատագրական շարժումները Սյունիքում 1722—1730 թթ.» (1950) և այլն:

Սակայն այդ աշխատություններից և ոչ մեկում հիշատակու-

¹ Г. А. Эзов, Сношения Петра Великого с армянским народом СПб, 1898, стр. 437.

թյուն անդամ չկա, թե Ուկրաինայի և Լեհաստանի հայերը ի՞նչ մասնակցություն են ունեցել բուն երկրում՝ Հայաստանում Գավրիթ-Բեկի և մյուսների գլխավորությամբ 1720-ական թվականներին բռնկված ազատագրական շարժումներին:

Սոսկիվայի Հին ակտերի արխիվում մեր հայտնաբերած նոր փաստաթղթերից¹ պարզվում է, որ մինչև Գավրիթ-Բեկի ապստամբությունը ոչ միայն Ղարաբաղում ու Սյունիքում, այլև հայ ժողովրդի մի շարք այլ հատվածներում, նախապատրաստական որոշ աշխատանքներ են կատարվել Հայաստանի ազատագրության համար: Այդ փաստաթղթերը ցույց են տալիս, որ Գավրիթ-Բեկի զբլխավորած ապստամբությունը լինելով հայ ազատագրական շարժման հերոսական դրվագներից մեկը, իր արձագանքն է գտել նաև Հայաստանից դուրս գտնվող հայերի մեջ:

Հրատարակվող փաստաթղթերը այս ու այն չափով լույս են սփռում հայ ազատագրական պայքարի մեծ մունետիկ Իսրայել Օրու ընկեր ու նրա գործի շարունակող Մինաս վարդապետ Տիգրանյանցի, ինչպես և Գավրիթ-Բեկի, Մխիթար սպարապետի, Ավան յուզբաշու, Գրիգոր յուզբաշու, Թարխան յուզբաշու, Իվան Կարապետի և ուրիշների գործունեության վրա:

Արխիվային բազմաթիվ փաստաթղթերի մանրակրկիտ ուսումնասիրությունը մեզ բերում է այն եզրակացություն, որ Իսրայել Օրու մահվանից հետո Մինաս վարդապետը չի լքել ու չի հեռացել ազատագրական պայքարի ասպարեզից: Նա շարունակել և ամեն կերպ ձգտել է առաջ մղել այն գործը, որ ավելի քան 10 տարի Օրու հետ միասին կատարում էր:

Իսրայել Օրու մահվանից մի քանի տարի անց (Օրին մահացել է 1711 թ. օգոստոսին, Աստրախանում), 1714 թվականին Մինաս վարդապետը ուսական արքունիքին ներկայացնում է մի զեկուցագիր՝ հայերի ազատագրության և Ռուսաստանի հովանավոր-

¹ Հրատարակվող փաստաթղթերը մենք հայտնաբերել ենք 1946—1947 թվականներին. մտադիր էինք լրացուցիչ ուսումնասիրություններ կատարել Ուկրաինայի և Լեհաստանի արխիվներում, բայց մեզնից անկախ պատճառներով հնարավոր չեղավ: 1938 թ. Համալսարանի գիտական սեփական զեկուցում կարգացինք, որի համառոտ թեկերը տպագրվեցին: Տես Վ. Պարսամյան, «Լեհաստանի մասնակցությունը Գավրիթ-Բեկի ապստամբությանը», «XII Գիտական սեփական (զեկուցումներ թեղիսներ)», Երևանի Պետական համալսարան, 1938, էջ 1—73:

րության տակ համարմբելու մասին: 1715 թվականին Պետրոս I-ը Ա. Պ. Վոլինսկու ղեկավարութեամբ դեսպանութիւն է ուղարկում Պարսկաստան: 1716 թվականին Մինաս վարդապետն է գործուղվում Անգրկովկաս: Մինաս վարդապետին հանձնարարվում է կապ պահպանել Վոլինսկու հետ, անհրաժեշտ օգնութիւն ստանալ նրանից, հուսադրել հայերին և համարմբել Ռուսաստանի շուրջը:

Ա. Վոլինսկու դեսպանութիւնը, Մինաս վարդապետին Անգրկովկաս գործուղելը տրոշակի քայլեր էին Պետրոս I-ի պարսկական արշավանքի և դրա հետ կապված հայ-վրացական միացյալ ապստամբութեան նախապատրաստման ուղղութեամբ:

1716 թ. հուլիսին Մինաս վարդապետը գալիս է Էջմիածին, բայց Աստվածատուր կաթողիկոսը, վախենալով պարսիկներից, շատ սառն է ընդունում նրան: Հակառակ դրան, Գանձասարի Եսայի կաթողիկոսը, որը հեռատես և վճռական գործիչ էր, չբռնորեն է ընդունում Մինաս վարդապետին, նրան օժտում է եպիսկոպոս և նշանակում Ռուսաստանի հայերի առաջնորդ:

1716 թ. օգոստոսի 10-ին Եսայի կաթողիկոսը Մինաս վարդապետի միջոցով Պետրոս I-ին ուղարկած գրութեան մեջ ասում է. «Եւ ընդ այս յուշ լիցի մեծի տէրութեանդ, զի յառաջ քան զայս առաքեալ ի քումմէ թագաւորութեանդ Իսրայէլ Օրի դեսպանն եկն երկիրս Հայոց և զհամբաւ բարեյաղթութեանդ սփռեալ տարածեաց ի լսելիս մեր աճեցեցուն և այնքան յորդորեցաք ի սէր քո մինչ ես իմովք միաբանիւք ելեալ ընդ նմա հանդերձ սուղ ինչ բնծայիւք եկինք մինչև ի Յաշթարխան քաղաք, առ ի տեսութիւն և երկրպագութիւն մեծ և բարձր թագաւորութեանդ. ապա մեր մեղացն շեղե կատարումն խնդրուածոց մերոց, վասն զի դեսպանն անդ մեռաւ և զամենայն ինչ նորա և մերն ցիր ու ցան արարին և ոչ որ շուքնէաք ասպնջական և ծանոթ, դարձեալ դարձաք յետս և եկաք յերկիրս մեր:

Իսկ այժմ կրկին առաքեալ ի մեծէ թագաւորութեանդ եղբայրս մեր զՄինաս վարդապետս որ ի յազգէ մերմէ եկն եհայ երկիրս մեր և առ մեզ. և զբարի և աստուածահաճոյ կամք և խորհուրդ քաջագոր թագաւորութեանդ ծանոյց մեզ և մեք լսելով զուարճացաք և ցնծացաք ի հոգի և ի մարմին և յօժար սրտիւ կամիմք ընդ հովանեալ թևոց քոց լինիլ:

Եթե հաճեսցի տէրութիւն քո ի մեզ և զթասցիս ի վերա թշուառութեան մերում, մեք պատրաստ եմք ընդ առաջ քո ըստ իմում կարողութեանս, և մեր նահանգիս մելիքովք, մեծամեծովք և փո-

րումբք և ցործամ կամեսցի հզօր, թագաւորութիւնդ յաջապարել այսր կամօքն աստուծոյ, յայնժամ զնշան գործոյն խընդրեմք ցուցանել մեզ զի առաւել հաստատ լիցուք ի վերայ խորհրդեանս, և ապա զամենայն հանգամանք երկիրս ծանուցուք առաջի քոյ»¹:

1722 թվականին, երբ սկսվեց Պետրոս I-ի պարսկական արշավանքը, ռուսական բանակում էր գտնվում նաև Մինաս վարդապետը: Իսրայել Օրուց հետո նա էր բանակցութիւններ վարում ռուսական արքունիքի հետ և զլիսավորում հայ-ռուսական հարաբերութիւնները: Պետրոս I-ի կողմից Իվան Կարապետին Անգրկովկաս գործուղելու և անհրաժեշտ հանձնարարութիւններ տալու գործում նույնպես Մինաս վարդապետը ակտիվ մասնակցութիւն է ունենում:

Արխիվային փաստաթղթերից երևում է, որ Մինաս վարդապետ Տիգրանյանը, հայ ազատագրական պայքարի այս վճռական պահին, եռանդուն գործունեւթյուն է ծավալել ոչ միայն կովկասահայերի մեջ, այլև Ռուսաստանի, Ուկրաինայի, Լեհաստանի հայկական գաղթավայրերում, աշխատել է նրանց համախմբել ու ուղի հանել Հայաստանը ազատագրելու համար:

Հայերը Ռուսաստանի հետ կապեր են ունեցել վաղ ժամանակներից սկսած: Պատմական փաստերը վկայում են, որ հատկապես Կիևյան Ռուսիայի և հետագա շրջաններում գնալով ավելի ու ավելի են ընդլայնվել հայ-ռուսական տնտեսական, քաղաքական և կուլտուրական կապերը: Օտար նվաճողների ավերիչ հարձակումների տակ հարկազրկած թողնելով իրենց հայրենիքը, մեծ թրվով հայ աշխատավորներ տարբեր ժամանակներում գաղթել և բնակութիւն էին հաստատել Ռուսաստանում, Ղրիմում, Ուկրաինայում, Լեհաստանում և Արևելյան Եվրոպայի մի շարք այլ երկրներում:

Իրենց նոր բնակավայրերում հայերը գերազանցապես զբաղվում են առևտրով ու արհեստներով: Նրանք տնտեսական, քաղաքական և կուլտուրական սերտ կապերի մեջ են մտնում տեղական ժողովուրդների՝ ռուսների, ուկրաինացիների, լեհերի և ուրիշների հետ:

XIII—XIV դարերից սկսած Արևելյան Եվրոպայի հայ գաղ-

¹ ГАФКЭ. 1716 г., л. № 3, л. 62—63, ЭЗОВ, № 205.

Թավայրերի բնակչութունն ավելի է ստվարանում. աճում է նրա տեսակարար կշիռը երկրամասի տնտեսական և կուլտուրական կյանքում: Իրենց ձեռներեցութեամբ, տնտեսական-կուլտուրական աշխույժ գործունեութեամբ հայերն առանձնապես աչքի են ընկնում Ղրիմում, Լվովում, Կամենեց-Պոդոլսկում և Լուցկում:

Ռուս պատմաբան պրոֆ. Իվան Լիննիչենկոն, խոսելով Լեհաստանի և Հարավ-Արևելյան Ռուսիայի հայերի մասին, գրում է. «Հայերը շատ հին ժամանակներից ձեռնամուխ եղան ցամաքային առևտրին Արևմուտքի և Արևելքի մեջ. իսկ իտալական գաղութների «անկումից հետո երիմում, բոլոր վաճառականությունը նոքա իրանց հաջողակ ձեռքը ձգեցին»¹:

Խոսելով Ռուսիայի հայերի մասին Ի. Ա. Լիննիչենկոն գրում է. «Հարավային Ռուսիայի քաղաքների միջին շրջանի պատմության մեջ հայերին շատ նշանավոր տեղ է պատկանում: Առանց որևէ չափազանցության կարելի է հաստատել, որ Հարավային Ռուսիայի ամենահռչակված առևտրական կենտրոնները, ինչպիսիք են Իլվովը, Լուցկը, Կամենեց-Պոդոլսկը իրենց հարստութեամբ, փարթավություններ և նշանակություններ մեծավ մասամբ պարտական են առանձնապես հայերին: Այդ ճարպիկ, աշխույժ և ընդունակ ամենայն ձեռնարկությունց ժողովրդի շնորհիվ էր հատկապես, որ Հարավային Ռուսաց առևտրական (կենտրոնները միջնորդ դարձան Արևելքի և Արևմուտքի վաճառականության մեջ»²:

«Հարավային Ռուսիայում և Լեհաստանում,— գրում է Լիննիչենկոն,— այն աստիճան սովորական էր հայերին տեսնել արևելյան ապրանքների առևտրի մեջ, որ մի ամբողջ շարք արևելյան ապրանքներ ուղղակի «հայկական ապրանք» էին կոչվում»³:

Խոսելով հայ արհեստավորների մասին նույն հեղինակը գրում է. «Սակայն հայերը չէին սահմանափակվում միայն օտար ապրանքներ վաճառելով: Նրանց վարպետները իրենք էին արտադրում մի շարք իրեր, որոնք գերազանցապես բավարարում էին

¹ «Черты из истории сословий в Юго-Западной (Галицкой) Руси XIV—XV вв», исследование Ив. А. Линниченко, Москва, 1894. Թարգմանությունը (Խ. Հովհաննիսյանի) տես «Հանդես գրականական և պատմական», գիրք 5, 1894 թ., Մոսկվա, էջ 339:

² Նույն տեղում:

³ И. Линниченко, Общественная роль армян в прошлом Юго-Западной Руси, Киев, 1895, стр. 6.

այն ժամանակվա շխախտյալական հասարակության պահանջները: Լվովի ոսկերչության փառքը գլխավորապես հայերն էին պահում»¹:

Նշելով, որ Հարավային Ռուսաց քաղաքի պատմության մեջ հայերին պատկանում է նշանավոր տեղ (էջ 356), պրոֆ. Լիննիչենկոն սխալվում է սակայն, երբ գրում է, թե «...կուլտուրական խնդիրները հետո են նոցանից: Բոլոր նոցա գործունեության շարժառիթը ամբողջ աշխարհը նոքա համար լով առևտրական մի շուկա էր»²:

Հարավային Ռուսաստանի և Լեհաստանի հայերի կուլտուրապատմական գործունեությանը վերաբերող գրավոր աղբյուրները և նյութական կուլտուրայի հուշարձանները ցույց են տալիս, թե որքան անհիմն ու միակողմանի են պրոֆ. Ի. Լիննիչենկոյի այդօրինակ դատողությունները:

Դժբախտաբար մենք մինչև օրս էլ չունենք Ռուսաստանի, Ուկրաինայի, Ղրիմի և Լեհաստանի գաղթավայրերի ամբողջական, ղրտական պատմությունը: Առհասարակ մեր գաղթօջախների պատմությունը լավ չի ուսումնասիրված: Սակայն մեղ հայտնի հրապարակված և արխիվային անտիպ նյութերը ցույց են տալիս, որ Ռուսաստանում, Ղրիմում, Ուկրաինայում, Լեհաստանում, Մոլդավիայում, Վալախիայում և այլուր, հայ աշխատավորությունը ոչ միայն տնտեսության մեջ, այլև քաղաքական կյանքում, գիտությունում, գրականության, արվեստի, կուլտուրայի բնագավառներում աչքի ընկնող դեր է կատարել, իր որոշակի լուսման մուծել հայ և ընդհանուր կուլտուրայի գանձաբանում:

Այս տեսակետից շատ պերճախոս է Լվովի և Կամենեց-Պոդոլսկի հայ գաղթօջախների օրինակը:

Լվովը Արևելյան Եվրոպայի նշանավոր քաղաքներից էր: XII դարից սկսած հայ բնակչությունը հետզհետե կենտրոնանում է Լվովում, որն հետագայում դառնում է հայկական աչքի ընկնող կենտրոն: Լվովում կառուցվում են հայկական թաղամասեր, փողոցներ, եկեղեցիներ. հիմնվում են դպրոց, թատրոն, տպարան:

Հայկական խոշոր օջախ էր նաև Կամենեց-Պոդոլսկը: «Կամենեցում 900-ի շուրջ տներ հայերին էին պատկանում և 1200 հայ

¹ И. Линниченко, Общественная роль армян в прошлом Юго-Западной Руси, Киев, 1895, стр. 6.

² «Հանդես գրականական և պատմական», գիրք 5, 1894, էջ 356:

րնտանիք կար այնտեղ»—գրում է պրոֆ. Լիննիչենկոն¹: Կամենեցի քաղաքում երկու հայկական բնակավայր կար Армяне և Армянки անունով²:

Լվովի, Կամենեց-Պոդոլսկի, ինչպես և Լուցկի, Յարոսլավլի, Գալիչի և մի շարք այլ վայրերի հայ համայնքները, հիմնել էին առանձին դատարաններ, որոնք առաջնորդվում էին հայկական դատաստանադրքերով: Նրանք ունեին իրենց համայնական վարչությունը, ավագների խորհրդարանը, կառավարիչը (վոյսթ), քահանաներն ու եպիսկոպոսները: Լվովում նույնիսկ երկու հայ վոյսթ կար, մեկը՝ քաղաքի, մյուսը՝ արվարձանների համար:

XIV դարում հայ եպիսկոպոսներ կային Լվովում, Կամենեց-Պոդոլսկում, Լուցկում և Յարոսլավլում (եպիսկոպոսներ պահվում էին հայաշատ կենտրոններում):

Ղրիմում, Ուկրաինայում, Լեհաստանում բնակություն հաստատած հայ աշխատավորությունը, մերթ օգտվելով նպաստավոր պայմաններից, իսկ հաճախ հաղթահարելով մեծ դժվարություններ, XIII—XIV դարերից սկսած կարողանում է տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքի քիչ թե շատ նպաստավոր պայմաններ ձեռք բերել: Հայերը հետզհետե սերտ փոխհարաբերությունների մեջ են մտնում տեղական ժողովուրդների հետ, գործուն մասնակցություն ունենում նրանց տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքի զարգացմանը: Նրանցից շատերը աչքի են ընկնում քաղաքական, ուղղմական, դիվանագիտական կյանքում, գրականության, գիտության ու արվեստի ասպարեզում: «Դեռևս XIV դարից,— ասում է պրոֆ. Լիննիչենկոն,— թարգմանիչների կարևոր պաշտոնը գտնվում էր գրեթե բացառապես հայերի ձեռքում»³: «Կյանքի պայմանները յուրաքանչյուր հայի de facto դարձրել էին իսկական դիվանագետ: Զարմանալի չէ, որ հայերը շատ հաճախ հանդես էին գալիս որպես դիվանագետներ նաև de jure: Ոչ ոք հայերից չալ չգիտեր թաթարների, թուրքերի և արևելյան մյուս ժողովուրդների կարգերն ու բարքերը»⁴:

¹ Տես «Հանդես գրականական և պատմական», 1894 թ., գիրք 5, էջ 340, Город Каменец-Подольск, историческое описание Е. Сецанского, Киев, 1895:

² Տես Колонизация армян в Юго-Западной России, Е. К., 1903, էջ 2:

³ И. Линниченко, Общественная роль армян в прошлом Юго-Западной Руси, Киев, 1895, стр. 8.

⁴ Նույն տեղում, էջ 8:

Պատահական չէ, որ Լեհաստանի թագավորները ու խոշոր Դեպոզիտերը, տեղամ գերմանական կայսրը և ուրիշները, Արևելքի երկրների հետ բանակցություններ վարելիս հաճախ դիմում էին այդ դիվանագետների օգնությանը: Այսպես, օրինակ, 1623 թվականին Լեհաստանի ղեսպանը Թուրքիայում եղել է հայ Քրիստոսոփոս Սերերկովիչը, իր ժամանակի աչքի ընկնող դիվանագետներից մեկը: XVII դարի սկզբում դիվանագիտական իր գործունեությամբ ոչ թե Լ. ընկել և բարձր կոչման արժանացել նաև հայ Պետր Գրիգորովիչը և ուրիշներ:

XIII—XVIII դարերում, շուրջ 500 տարի, Արևելյան Եվրոպայի նայկական բնակավայրեր հանդիսացել են հայ ժողովրդի խոշոր հատվածներից մեկի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքի օջախներ: Կիլիկիայից հետո Արևելյան Եվրոպան եղել է բերեա ամենախոշոր հայկական կենտրոնը, որն իր ուրույն տեղն ունի մեր ժողովրդի պատմության մեջ:

Հարթ չի ընթացել հայ ժողովրդի պատմությունը բուն երկրրում՝ Հայաստանում: Շատ ավելի քարքարոտ ու փշոտ է եղել տարագիր հայության ճանապարհը օտար երկնակամարի տակ: Նրանք բառի բուն իմաստով մաքառել են իրենց ֆիզիկական գոյության և ազդության պահպանման համար: Օրինակ, Լեհաստանում և այլ վայրերում ապրող հայ աշխատավորները մշտապես դանդիլ են լեհական պաների դաժան ճնշման ու հալածանքի պայմաններում: Կաթոլիկացման ու պոլոնիզացիայի բռնի ասիմիլյացիոն քաղաքականությունը իր կործանարար հետևանքները ունեցավ Լեհաստանի հայ գաղութի համար:

Հայ աշխատավորությունը հերոսական դիմադրություն է ցույց տվել լեհական պաներին, կաթոլիկ եկեղեցուն, Նիկոլ Թորոսովիչին և նման ազգազավ գործիչներին: Հայ աշխատավորները ձեռք-ձեռքի տված ուկրաինացի և լեհ աշխատավորների հետ, տարիներ շարունակ պայքար են մղել իրենց հարստահարիչներին դեմ: Նրանք սկսելով մասնակցություն են ունեցել ուկրաինական ժողովրդի 1648—1654 թվականների ազատագրական պատերազմներին, Ռուսաստանի հետ Ուկրաինայի վերամիավորման համար մղված պայքարին¹:

¹ Այս մասին տես Վ. Պարսամյան, «Հայ և ուկրաինական ժողովուրդների գաղավոր բարեկամությունը», «Սովետական Հայաստան» (ամսագիր), 1954 թ., № 5:

Սակայն ծանր ու դժվարին էին կյանքի ու պայքարի պայմանները: Հայրենի հողից կտրված հայ աշխատավորների համար հաղթանակի հեռանկարներ չկային: Բնականաբար, նրանք իրենց հայացքը դարձնում էին դեպի Հայաստան՝ դեպի հայրենիք: Մի կողմից՝ սոցիալ-տնտեսական ու ազգային ճնշումների ուժեղացումը և ասիմիլյացիայի վտանգը, մյուս կողմից՝ ազատագրական շարժումների աշխուժացումը XVII—XVIII դարերում, ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստանում, գաղութահայ աշխատավորությանը մղում էին դեպի հայրենիք: Հայրենիքի ազատության գործն ու գաղափարը գնալով ավելի ու ավելի էին համակում նրանց:

Ահա այսպիսի իրադրության պայմաններում են ծագում կեհաստանի և Ուկրաինայի հայերի դիմումները՝ Հայաստան վերադառնալու և ազատագրական շարժումներին մասնակցելու համար:

Հայերի այս դիմումները և հայրենիք վերադառնալու հարցը սերտորեն կապված էին XVII դարի հայ ազատագրական շարժման աչքի ընկնող գործիչներից մեկի՝ Մինաս վարդապետ Տիգրանյանցի հետ:

Մինաս վարդապետ Տիգրանյանցը կեհաստանի և Ուկրաինայի հայ գաղթօջախներին ծանոթ էր դեռևս Իսրայել Օրու ժամանակից, որտեղ նրանք եղել էին և տեղի հայ գործիչների հետ անձնական կապեր հաստատել: 1701 թվականին Պետրոս I-ի հետ վարած բանակցությունների ժամանակ նրանք որպես թարգման իրենց հետ վերցրել էին նաև լեհահայ Օրեխովիչին:

Ամենայն հավանականությամբ, երբ 1717 թվականին Տիգրանյանցը Անդրկովկասից վերադառնում է Մոսկվա և Արտաքին գործերի կոլեգիային ղեկուցում է իր ուղևորության արդյունքների մասին, հենց այդ ժամանակ էլ կոնկրետ կերպով զրվում է կեհաստանի և Ուկրաինայի հայերին Հայաստանի ազատագրական պայքարի մեջ ներգրավելու հարցը: Այդ հարցի նախաձեռնությունը պատկանում է Մինաս վարդապետ Տիգրանյանցին:

Արխիվային փաստաթղթերից երևում է, որ Տիգրանյանցը կեհաստանի տիրապետության տակ գտնվող հայերի հետ բանակցություններ վարել է դեռևս մինչև 1720-ական թվականները: Օրինակ, 1727 թվականին Մինաս վարդապետին ուղարկած իր մի դիմումի մեջ Կամենեց-Պոդոլսկի հայերը գրում են. «1720 թվականին քեզ մոտ ուղարկեցինք Միքայելին, զրանից հետո ուղարկե-

ցինք նաև Հաչումին և Հակոբին. իսկ ինչքան ժողովուրդ կա պատրաստ Ռուսաստան գալու համար, որն սպասում է նորին կայսերական մեծության հրամանին»¹:

Կամենեց-Պոդոլսկի հայերի դիմումներից երևում է, որ նրանք տեղյակ էին Մ. Տիգրանյանցի 1716 թվականին Հայաստան կատարած այցելություն, էջմիածնում և Գանձասարում նրա վարած գաղտնի բանակցություններին:

Կեհաստանի բանակցությունները Տիգրանյանցի հետ խիստ գաղտնի էին կատարվում: «Մեր ամբողջ գաղտնիքը, որ մենք ունենք մեր սրտում, քեզ հայտնում ենք,— գրում են նրանք Տիգրանյանցին,— եթե թշնամին իմանա մեր գաղտնիքը՝ մեզ և մեր երեխաներին կտոր-կտոր կանի»²:

Կամենեց-Պոդոլսկի և շրջակայքի հայերը, որոնց մեջ կային նաև մեծ թվով Քուրբիայից ու Պարսկաստանից գաղթածներ ու փախածներ, որոնցից շատերի ընտանիքները մնացել էին թուրքերի ու պարսիկների գերության մեջ, մեծ ոգևորությամբ են ընդունում Մինաս վարդապետի հրավերը՝ Ռուսաստանի վրայով հայկական սղնախները գնալու համար:

1720—1725 թվականներին և հետագայում Կամենեց-Պոդոլսկի և շրջակայքի հայ բնակչության ներկայացուցիչները մի քանի անգամ լինում են Մոսկվայում, գաղտնի բանակցություններ վարում Մինաս վ. Տիգրանյանցի և նրա միջոցով Ռուսական արքունիքի հետ: Կամենեց-Պոդոլսկից Մոսկվա եկած Պետրոս վարդապետ Խաչատրյանը, Գրիգոր Ստեփանյանը և ուրիշներ Մինաս վարդապետին և Արտաքին գործերի կոլեգիայի գրասենյակին հայտնում են, որ Կամենեց-Պոդոլսկում 500 մարդ կա հավաքված և բոլորն էլ ցանկանում են գնալ հայկական սղնախները՝ տեղի հայերին օգնելու համար: «Մոսկվայում եղած 5 հոգի հայ մարդիկ հայտարարել են, որ այնտեղ մինչև 500 մարդ կա ժողովված... բոլորն էլ ցանկանում են գնալ հայկական սղնախները՝ հայկական ժողովին օգնելու»³:

Արտաքին գործերի կոլեգիայում Մինաս վարդապետը հայտարարում է. «Իսկ վերահիշյալ պետերը և նրանց մոտ գտնվող մյուս հայերը զինվորական մարդիկ են, բայց այդ բանը թաքցը-

¹ Փաստաթուղթ № 2:

² Նույն տեղը:

³ Նույն տեղը:

նում են և տեղից տեղ են թափառում առևտրական գործերով և թշվառ տեսքով: Նրանցից ոմանք ձի և հրացան ունեն, իսկ ուրիշները շունեն, բայց երբ նորին կայսերական մեծության հրամանով թուլատրվի Ռուսաստան գալու, ապա բոլորը կզան, թե նրանք, ովքեր ի վիճակի են իրենց զինել, թե նրանք, ովքեր հնարավորություն չունեն հրացան և ձի ձեռք բերել՝ կզան առանց դրանց և ամեն բանում կվարվեն նորին մեծության հրամանի համաձայն, այսինքն՝ եթե կարգադրվի, որ բոլորը զան հրացաններով կամ առանց դրանց, նրանք կզան հենց այնպես իրենց սեփական հաշվով, Ռուսաստանով անցնելու համար շքանկանալով նորին կայսերական մեծությունից որևէ օժանդակություն ոչ դրամով, ոչ սննդով, ոչ սպչեքով, միայն թե իրենց Ռուսաստանով անցնելու ազատ և անհապաղ իրավունք տրվի»¹:

Կամենեց-Պոդոլսկի հայ պատվիրակները հայտնում են, որ լեհաստանում, Վալախիայում, Հունգարիայում և այլ վայրերում ևս մեծ թվով հայեր կան, որոնք ուրախությամբ կանցնեն Ռուսաստանի տիրապետության տակ և սղնախներին օգնության կաջին: Սակայն, ինչպես նրանք են ասում, լեհական և Քուրբական իշխանությունները արգելք են հանդիսանում: «Լեհաստանից միանգամից այստեղ գալ չեն կարողանում. մեկնում են երկու-երեք հոգով, բայց այդ դեպքում էլ շատ արգելքներ են լինում: Եթե լեհաստանից մեկնելու դժվարություններ չլինեն հայերի համար, ապա նրանցից 300 մարդուց ավելի եկած կլինենին»²:

Մոսկվայի բանակցությունների ընթացքում հարց է ծագում, թե որտե՞ղ պետք է բնակություն հաստատեն լեհաստանից, Ուկրաինայից և այլ վայրերից եկած հայերը: Ռուսական արքունիքում հայերին առաջարկում են մշտական բնակություն հաստատել Կասպից ծովի ափերին՝ Գերբենդի և Քաքվի շրջաններում, որոնք գրավվել էին ռուսական զորքերի կողմից: Դա բխում էր ցարական կառավարության քաղաքական նոր կուրսից, որ նա վարում էր 1724 թ. հունիսին Քուրբիայի հետ կնքած պայմանագրից հետո: Այս շրջանում ցարական կառավարությունը հակառակ մինչև այդ վարած ակտիվ գործողությունների, Անգրկովկասի նկատմամբ բռնե՞ էր բավականաչափ պասիվ և տարտամ դիրք:

Մինաս վարդապետ Տիգրանյանցին և լեհահայերի ներկայա-

ջուցիչներին հայտնի էր այդ: Ըստ երևույթին դժգոհ քաղաքական այդ նոր կուրսից, նրանք իրենց դիմումների մեջ խնդրում էին թույլ տալ Ռուսաստան անցնել, գնալ հայկական սղնախները, բայց հրաժարվում էին Կասպիականի ափերում մշտական բնակություն հաստատելուց: Արտաքին գործերի կոլեգիայում Մինաս վարդապետը Կամենեց-Պոդոլսկի և շրջակայքի հայերի անունից հայտնում է. «Իսկ իրենք բոլորը ցանկանում են գնալ հայկական սղնախները... Ռուսաստանում և Պարսկաստանից նոր նվաճած մերձկասպյան մարզերում բնակություն հաստատել և իրենց կանանց ու երեխաներին այդտեղ բերել չեն ցանկանում»¹:

Մոսկվայում տեղի ունեցած զաղտնի բանակցություններից հետո, Պետր II թագավորի ուկազի համաձայն Գերագույն զաղտնի խորհուրդը որոշում է թուլատրել հայերին Կամենեց-Պոդոլսկից և այլ վայրերից փոքր խմբերով անցնել Ռուսաստան: 1728 թվականի մարտի 13-ին Գերագույն զաղտնի խորհուրդում որոշվում է «Արտաքին գործերի կոլեգիայի կողմից Մինաս վարդապետին բանավոր հայտարարել, որպեսզի նա իր կողմից զրի այդ հայերին, որ նորին կայսրական մեծությունը ամենաողորմածաբար բարեհաճեց թույլ տալ Ռուսաստանով Պարսկաստան անցնել կամ նրանց, ովքեր կցանկանան բնակություն հաստատել և ապրել Ռուսաստանում, այստեղ զան Կիևի վրայով, անպայման իրենց միջոցներով, ինչպես նրանց ներկայացուցիչները հայտարարել են»²:

Գերագույն զաղտնի խորհրդի որոշման համաձայն, 1728 թվականի հունիսի 1-ին Կիևի փոխնահանգապետ Գ. Լ. Շտոկի կարգադրությամբ 15 հայերի թուլատրվում է Կիևի վրայով մեկնել Մոսկվա՝ Արտաքին գործերի կոլեգիային ներկայանալու համար: Հայերի հետ, որպես ուղեկցող, Մոսկվա է ուղարկվում Կիևի կայսրի զինվոր Տիմոֆեյ Սալգատովը:

Մինչ այդ և դրանից հետո փոքր խմբերով Կիևի վրայով Մոսկվա են գալիս նաև ուրիշ հայեր: Կամենեց-Պոդոլսկից Մոսկվա ժամանած հայերին վերաբերող մի փաստաթղթից երևում է, որ 1728 թ. մայիսի 6-ին Մոսկվա է եկել 5 հոգի, այդ թվում՝ Պետրոս եպիսկոպոս խաչատուրովը, Գրիգոր Ստեփանովը, Սահակ Հովսեփովը, Վահան Հովհաննեսովը և Մանվել Պետրովը:

1728 թ. հուլիսին Մինաս վարդապետ Տիգրանյանցը Արտաքին

1 Փաստաթուղթ № 2:
2 Փաստաթուղթ № 7:

1 Փաստաթուղթ № 2:
2 Նույն տեղում:

գործերի կոլեգիային ներկայացնում է իր ձեռագրով գրված 23 հայերի ցուցակը, որոնք Կամենեց-Պոդոլսկից ժամանել էին Մոսկվա և խնդրում էին թույլ տալ սղնախներ մեկնել¹։

Հուլիսի 29-ին Արտաքին գործերի կոլեգիան Գերագույն գաղտնի խորհրդին է ներկայացնում հիշյալ հայերի ցուցակը՝ Մոսկվայից Յարիցինի, Չերնոյարսկի, Թերեքի վրայով (ցամաքային ճանապարհով, Աստրախանում ժանտախտ էր) Բաքու՝ գեներալ-լեյտենանտ Թումյանցիի մոտ գնալու, իսկ այնտեղից սղնախներ անցնելու համար։

1728 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին սղնախներ մեկնելու թույլտվություն են ստանում 26 մարդ, այդ թվում գնդապետ Գրիգոր Ստեփանովը, Պետրոս եպիսկոպոս Խաչատուրովը, Պողոս Ավագովը, Իվան Կարապետովը, Հարություն Բաղդասարովը և ուրիշներ։

Դժվար է ասել, թե Լեհաստանից, Ուկրաինայից և Ռուսաստանից ինչքան հայեր են եկել սղնախներ և ի՞նչ մասնակցություն են ունեցել ազատագրական կռիվներին։ Մեր հայտնաբերած փաստաթղթերը միայն և միայն նոր լույս են սփռում XVIII դարի հայ ազատագրական շարժման մութ էջերի վրա։ Իսկ հարցի լրիվ և ամբողջական լուսաբանման համար, հարկավ, անհրաժեշտ է մասնակրկիտ պրպտումներ կատարել Ռուսաստանի, Ուկրաինայի և Լեհաստանի համապատասխան արխիվներում, որտեղ ամենայն հավանականությամբ կգտնվեն լրացուցիչ նյութեր և մեր կողմից առաջ քաշված հարցը հնարավոր կլինի դնել և լուծել փաստական ավելի հարուստ նյութերի հիմքի վրա։

Մոսկվայի Հին ախտերի արխիվի հետագա տարիների գործերում մեզ հաջողվեց մի քանի նոր փաստաթղթեր հայտնաբերել Կամենեց-Պոդոլսկից սղնախներ եկած Գրիգոր Ստեփանովի վերաբերյալ։

Փաստաթղթերից պարզվում է, որ մինչև Մոսկվա գալը Գրիգոր Ստեփանյանը ապրել էր Իզմայիլում և Կամենեց-Պոդոլսկում, զբաղվել առևտրով և զինվորական գործով։ Մոսկվայում, ամենայն հավանականությամբ, նա նշանակվում է սղնախներ մեկնող հայերի հրամանատար։

1728 թվականին Գրիգոր Ստեփանյանը իր խմբի հետ Մոսկվայից Յարիցինի—Թերեքի վրայով գալիս է Բաքու և ներկայանում

այդտեղ գտնվող ռուսական զորքերի հրամանատար գեներալ-լեյտենանտ Թումյանցիին։ Անհրաժեշտ ուղևորական օժանդակություն և դիրեկտիվներ ստանալուց հետո, Գ. Ստեփանյանի ջոկատը անցնում է սղնախներ, միանում տեղի հայկական զինված ուժերին և ապառիվ մասնակցություն ունենում 1728—1730 թվականների ազատագրական կռիվներին։

Թուրքական և պարսկական զավթիչների դեմ հայկական սղնախների մղած ազատագրական կռիվներին աչքի ընկնող մասնակցության համար Գրիգոր Ստեփանյանն ստանում է յուզբաշու (հարյուրապետի) կոչում։

1741 թվականին Աննա Իվանովնա թագուհուն ուղղած իր մի դիմումի մեջ Գր. Ստեփանովը գրում է. «Անցյալ 1728 թվականին հայ եպիսկոպոս Մինաս վարդապետի հորդորանքով, ես Լեհաստանից եկա Համառուսական կայսրության վրայով ձեր կայսրական մեծության ծառայության հայկական ժողովում (Սըրդնախում—Վ. Պ.), որտեղ և ամենայն հավատարմությամբ ծառայեցի թուրքերի ու պարսիկների դեմ»¹։

Ռուսերեն լեզվով գրված այս դիմումի տակ հայերեն ստորագրված է «Էս աղագալին ես ուզալը Ըստեփանի որդի Գրիգորս ձեռն դր»։

Մոսկվայի վերահիշյալ արխիվում պահպանվել են նաև Բաղդասարյան, Թարխան յուզբաշու և ուրիշների հետ գրած Գրիգոր յուզբաշու համատեղ դիմումները։ Այս դիմումներից երևում է, որ Դավիթ-Բեկի գլխավորած ապստամբության պարտությունից հետո, 1730 թվականին Գրիգոր Ստեփանովը Թարխան յուզբաշու և մյուսների հետ սղնախներից անցնում են Նիզովոյ և ծառայության մտնում ռուսական բանակում։

1730 թվականին Գրիգոր յուզբաշուն 131 մարդով անցնում է Գերբենդ, լինում է Ղզլարում, իսկ հետո իրավունք է ստանում բնակություն հաստատել Աստրախանում։ 1742 թվականին Գր. Ստեփանովը լինում է Պետերբուրգում։ Նրան վերաբերող մեր գտած վերջին փաստաթուղթը 1746 թվականին Արտաքին գործերի կոլեգիայից տրված մի տեղեկանքն է, որի տակ հայերեն լեզվով գրված է. «Ես Գրիգոր Ըստեփանովս վզալ (վզալ) ըսբրավը (սպրավկա) նաստրան (ինաստրանի) կալեց (կոլեգիայի) 1746 իր ունվարնի (22 հունվարի)»։

¹ Տես փաստաթուղթ № 5:

¹ Փաստաթուղթ № 34:

Այստեղից երևում է, որ զնդապետ Գրիգոր Ստեփանյանը մինչև 1746 թվականը կենդանի է եղել և իր կյանքի վերջին տարիները անցկացրել Ասորախանի հայ դաղութում:

Այսպիսով, արխիվային նորահայտ փաստաթղթերից մենք հանգում ենք հետևյալ եզրակացության.

ա) XVIII դարի 20-ական թվականներին նշանավոր զորավար ու մեծ հայրենասեր Դավիթ-Ֆեկի գլխավորած ապստամբության և առհասարակ թուրքական ու պարսկական բռնակալության դեմ ուղղված հայ ազատագրական շարժումների նախապատրաստության ուղղությամբ զգալի աշխատանքներ են կատարվել ոչ միայն Հայաստանում և Անդրկովկասում, այլև Ռուսաստանում, Ուկրաինայում, Լեհաստանում և այլ վայրերում բնակվող տարագիր հայ բնակչության մեջ:

բ) Պարսկաստանի և Թուրքիայի ծանր ու դժնդակ տիրապետության շրջանում Հայաստանից տարբեր ժամանակներում հեռացած, Լեհաստանում, Ուկրաինայում և այլուր բնակություն հաստատած հայերի հայրենադարձության, նրանց Ղարաբաղի և Սյունիքի ազատագրական շարժումներին մասնակից դարձնելու գործում աչքի բնկնող դեր է կտարել մեծ հայրենասեր Իսրայել Օրուսընկեր ու գաղափարակիր Մինաս վարդապետ Տիգրանյանցը: Հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների մեջ ևս Մ. Վ. Տիգրանյանցը կենտրոնական դեմք է եղել:

գ) Ուկրաինայից ու Լեհաստանից Ռուսաստանի վրայով աղնախներ եկած հայերը, զնդապետ Գրիգոր յուզբաշի Ստեփանյանի գլխավորությամբ, ակտիվ մասնակցություն են ունեցել թուրքական ու պարսկական զավթիչների դեմ մղվող ազատագրական կռիվներին, նպատակ ունենալով Հայաստանը ազատագրել օտարների լծից և ապրել ազատագրված հայրենիքում:

Դավիթ-Ֆեկի գլխավորությամբ ազատագրական պայքարի ելած տեղացի ու եկվոր հայերը ոգեշնչված էին այն վեհ գաղափարով ու գործով, որ մեծ ու հզոր Ռուսաստանի օգնությամբ, իրենք կթոթափեն պարսկական ու թուրքական դաժան լուծը և կվերականգնեն Հայաստանի ազատությունն ու անկախությունը:

Եվ եթե չլինեք թուրքական զորքերի արշավանքը Հայաստան ու Անդրկովկաս, հայերը և Անդրկովկասի մյուս ժողովուրդները XVIII դարի 20-ական թվականներին ազատագրված կլինեին օտար հարստահարիչների լծից:

ПРЕДИСЛОВИЕ

В истории освободительных движений Армении XVIII век является эпохой героических сражений. В этот период освободительная борьба армянского народа против турецкого и персидского ига достигает небывалого подъема. Стечение ряда внутренних и внешних обстоятельств поднимает на освободительную борьбу широкие народные массы, на арену борьбы выходят политически зрелые отважные деятели, разрабатываются новые планы освобождения Армении, постепенно формируется идеология освободительного движения.

Борьба армянского народа против султанской Турции и шахской Персии зарождается в период их агрессивных действий в отношении Армении. Освободительное движение армянского народа — это стремление избавиться от иноземных захватчиков, справедливая и прогрессивная борьба, борьба за свободу. Это движение, направленное против захватчиков и поработителей, относится к числу тех движений народов, которые способствовали развитию истории общества его поступательному движению.

Для освобождения Армении от турецкого и персидского ярма решительные шаги предпринимались еще в середине XVI века. По поручению тайного совещания, состоявшегося в 1547 г. в Эчмиадзине, католикос Степанос Салмастеци едет в Европу, чтобы добиться помощи для армян.

В 1562 г. тайное совещание в Себастии под руководством Михаила Себастиаци решило обратиться за помощью к Римскому папе. Для переговоров в Рим был послан Абгар Тохатеци, который впоследствии сыграл значительную роль в армянском печатном деле.

В 1585 г. за помощью к Римскому папе обращаются также представители знати и духовенства Киликии.

Но все эти прошения о помощи остались безответны. Римского папу и правящие круги Запада освобождение Армении интересовало лишь в той мере, в какой это было необходимо для распространения на Востоке католичества и их влияния.

Вопрос раскабаления армян был снова возбужден во второй половине XVII века.

В этот период руководящие деятели освободительного движения все чаще связывают свои надежды, кроме Западных государств, с соседней северной державой—с Россией. В начале 70-х годов XVII века (по всей вероятности 1670—1671 г.) католикос Гандзасара Петрос в особом послании обратился к Алексею Михайловичу и просил его защитить армянский народ, стонущий под игом захватчиков¹.

В это самое время у русского царя просит помощи католикос Эчмиадзина Акоп Джугаеци, протестуя против злоупотребления налогами и притеснения армян персами².

После первого, начального периода формирования освободительного движения армянского народа против турецко-персидских поработителей последовал новый более организованный, более зрелый период.

В конце XVII и начале XVIII века один из выдающихся деятелей этого движения—Исраел Ори поставил вопрос

¹ См. В. Парсамян, Из истории армяно-русских отношений, Известия АН Арм. ССР, 1952, № 7, стр. 82 и «Армяно-русские отношения в XVIII в.». Подготовили к печати В. А. Парсамян, В. К. Восканян, С. А. Тер-Авакимова, под редакцией проф. В. А. Парсамяна, 1953, стр. 42.

² См. Ашот Ованисян, Послание русскому двору Акопа Джугаеци, «Арарат», 1915 г. и «Армяно-русские отношения в XVIII в.», 1953, стр. 98, 257—258. Это письмо Акопа Джугаеци, которое было найдено и опубликовано в 1915 г. историком Ашотом Ованисяном, долгое время считалось первым и единственным в 17 в. посланием русскому двору. В Московском архиве древних актов нами было обнаружено в 1946 г. обращение католикоса Петроса царю Алексею Михайловичу, которое является свидетельством того, что письмо Джугаеци не первый и не единственный документ, касающийся русско-армянских политических связей 17 в.

освобождения Армении на более реальную и прочную основу, связал ее с помощью от России. После долгих и тщетных попыток возбудить интерес Западной Европы к положению армян, после долгих лет скитаний по Европе Исраел Ори пришел к выводу, что нельзя связывать надежды освобождения Армении с одной только Европой.

Если в первый период своей деятельности с 1680—1690 гг. он шел по уже проторенному пути, т. е. стремился добиться помощи и надеялся в основном на Римского папу и Западные государства, то на закате XVII века он обратил свои взоры на Россию.

Эта идейная эволюция произошла в Исраеле Ори не вдруг. Близко познакомившись с внутренней и внешней политикой европейских государств, закалившись в скитаниях поистине рыцарской жизни, полной тягот и лишений, он вырос политически, стал осмотрительным, зрелым и дальновидным дипломатом.

Исторические события, происходившие в Армении, на Ближнем Востоке, в Западной Европе и в России, оставили глубокий отпечаток на жизни и деятельности Исраела Ори.

Обманувшись в надеждах на помощь Западноевропейских стран, хорошо зная и учитывая исторические связи народов Закавказья и России, перспективы их развития, Ори становится самым рьяным защитником и апологетом русской ориентации.

В 1701 г. Ори вместе с вардапетом Минасом Тиграняном приезжает через Польшу в Москву. Предъявив Петру обращение с подписями и печатями армянских меликов, он от их имени просит помощи для освобождения Армении от турецко-персидского владычества. Здесь в Москве он устанавливает близкие отношения с находящимся там грузинским царем Арчилом, который в это время вел переговоры относительно освобождения Грузии. Исторические документы свидетельствуют о том, что представители двух народов, разделяющих одну роковую судьбу, во время переговоров в Москве поддерживают друг друга, объединенными силами разрабатывают новые планы освобождения Армении и Грузии.

